

## «ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ. ԸՆՏՐԱՆԻ»

Յուրաքանչյուր էջ ու սևագիր թերթիկ այս գրքի սահմաններից հեռացնելով ցավ ի սիրտ, ուղղակի պոկելով, ուղղակի վտարելով դրանք, որ վավերական դիմադարձությունն են իրենց դաժան ժամանակի, մի կողմ դրվող յուրաքանչյուր թղթի հետ միատեղ մի կողմ թողնելով էպոխայի հրեշտրեն վիթխարի զանգվածից ծանր մի հատված և չարենցյան խորագիր խարանը - դրոշմը - խոսքը այդ հատվածքին,

մեծ մտածողի, աշխարհի մեծ քաղաքացու, հայրենիքի երդվյալ մարտիկի, գրականության հսկայի ծննդյան այս առաջին հարյուրամյակի և մահվան՝ սպանության, ինքնասպանության, ինքնաբացարկի, ինքնահրկիզման վաթսունամյակի առիթով սույն հատորը մենք սահմանեցինք

ափսոսանքով շատ ավելի այս ընտրանու սահմաններից հեռացվող չարենցյան կոնահար դրոշմի, խարանի, վերաբերմունքի, խոսքի համար, քան պատմական հենքի,

որովհետև

այսօր ապրողներին առջև կյանքի-մահի մարտահովտում էպոխան հառնել է հրեշաբար անհեթեթ իր նույն զանգվածով վաթսուն տարին և հարյուր տարին ոչինչ ասես չեն հեռացրել, չեն սուզել ժամանակի օվկիան, պապանձյալ վերապրողներիս առջև էպոխան նույն հրեշի իր ծանր գալարներն է անում, ամբողջ ժողովուրդներ ու հայրենիքներ են խելագարվում,

իսկ մեծ հայեցողը, այլև հիացողը - ո՛չ ընկրկողը, ո՛չ սարսփահարը - մեծ՝ հիացողը որպես միայն թշնամի հսկաներ են հիանում միմյանց զենքուզարդով, որպես միայն երկիրն ինքն է հայում իր ծաղկունն ու փլուզունը՝ մեծ հայեցողը, այլև ճակատողը, մաքառողը, մարտնչողը, էպոխայի հետ ժանիք ժանիքի կռվողը, էպոխային վերքերի վիհեր տվողն ու խոր վերքեր առնողը մենք ողջերս չենք -

ինքն է՝ Չարենցը՝ մարտիկը և արքան, մարդու հայրենիքի այս հարատև կռվի ոչ մի պահը չուրացած և ոչ մի մարտը չըրջանցած, արյուն տալով գահակալ բարձունքի հասած մարտիկը:

Ութսուն տարի առաջ իր հայտնության վեհությունը և վաթսուն տարի առաջ իր կորստյան մեծությունը նա հենց այս ահագնությամբ էլ տեսնում էր,

որ իր խոսքով տիրական մարդկանց արևային մի աշխարհ է բացվում, անլեզվության ստորագույն կապանքից ժողովուրդ է ճորտաթափվում, ժողովուրդ է կանգնում ժամանակի հետ խոսքի շքեղ տուրևառի, երկիր է դառնում ազատների հայրենիք,

և իր կոպերի հետ աշխարհ է փակվելու, հայրենիք է երես դարձնելու իր զավակներից որպես օտարներից, իր լռության հետ ժամանակն ինքն է լռելու, այլև խորթանալու, այլև թշնամանալու,

այլև խուսափելու սերունդներիս ու սերունդներիս խոսքից որպես անհաղորդ, անծանոթ, այլև թշնամի լեզվից,

և ինքը նորին անհրաժեշտությունը հարյուրամյա և վաթսուներամյա անցյալից պետք է բարձրացնի ժամանակներն ու տարածությունները հպատակեցնողին, և ժամանակներն ու տարածությունները պետք է, ինչպես մեծ տերությունները իրենց նվաճողին, ճանաչեն ու հպատակվեն իրենց եզակի տիրակալին: